Summary

HOVHANNES KAJAZNUNI IN SOVIET ARMENIA

HAYK MARTIROSYAN

The well-known national-political and party statesman Hovhannes Kajaznuni was one of the few Armenian politicians living in exile who could not withstand homesickness, and, ignoring all sorts of dangers, nevertheless returned to Soviet Armenia. In the historiography of Kajaznuni there is a lot of ambiguous information about the years in Soviet Armenia: few people know about the fate of the great Armenian after returning to the homeland. In Soviet Armenia, he worked as a highly qualified architect, received the title of professor, read lectures at the Technical Faculty of Yerevan University, and then at the Engineering Construction Institute. At the same time, he experienced deep disappointment in his life, in the face of the negative phenomena of the "personality cult" period. At the end of July of 1937, O. Kajaznuni was arrested, and on December 5 the k (USSR) ICRC Troika sentenced O. Kajaznuni as an active participant in the Dashnaktsutyun to death with the confiscation of his personal property. However, his execution was postponed on the basis of a diagnosis of tuberculosis, delivered by the prison doctor. Shortly thereafter, on January 15, 1938, at the age of 70, the first Prime Minister of the Republic of Armenia, Hovhannes Kajaznuni, died in the prison hospital.

ԱՅՐԱՐԱՏԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՉՈՒՏԵԱՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Զաքարեան Հայաստանի տիրակալ, շահնչահ Զաքարէ Բ. Զաքարեանը՝ 1205/6 թուականին կառավարման ընդարձակ բարենորոգում է իրականացրել Հայաստանի ազատագրուած տարածքում եւ հիմնել է կուսակալութիւններ[1]*։ Նա դրանցից մէկը՝ Այրարատի կուսակալութիւնը յանձնել է իր վստահելի զօրավարներից Վաչէ Ա. Վաչուտեանին՝ շնորհելով նրան իշխանաց իշխան բարձրագոյն կոչում*[2]*։*

Կուսակալ նշանակուած Վաչէ Ա. Վաչուտեանին՝ Զաքարէ Բ.ն բացի պետական պաշտօնին համապատասխան տարածքից, սեփականութեան իրաւունքով յանձնել է նոյն կուսակալութեան մէջ մտնող Արագածոտն, Շիրակ, Նիգ գաւառները, Անբերդ գաւառակը[3]*, այդ թւում ռազմավարական խիստ կարեւոր նշանակութիւն ունեցող Անբերդ բերդաքաղաքը։*

ԱՅՐԱՐԱՏԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾՔԸ

Այրարատի կուսակալութեան տարածքը թէեւ ստացել է պատմական Այրարատի նահանգի անունը, քանի որ ստեղծուել է

---

1 ՊԵՏՐՈՍԵԱՆՑ Տ., *Կուսակալութիւն-փոխարքայութիւնների հիմնումը Զաքարեան Հայաստանում*, ի *«Մխիթար Գօշ»*, 2017, թիւ 2, էջ 286-292:

2 PETROSYANTS, T., *The transference of the Ayrarat governorship-vicegerency to Vache I Vachutyan*, ի *Բազմավէպ*, 2016, թիւ 3-4, էջ 273-279:

3 ԶԱՔԱՐԻԱ ՔԱՆԱՔԵՌՑԻ, *Պատմութիւն։ Կոնդակ Սուրբ ուխտին Յոհաննու վանից*, ՎԻՐԱԲԵԱՆ, Ա., (աշխտ.), Երեւան 2015, էջ 183:

© National Library of Armenia

այդ նահանգի կենտրոնական մասում, բայց իրականում պահպանելով պատմական անունը, զբաղեցրել է պատմական նահանգի մօտ 25 տոկոսը։ Այն ընդգրկել է պատմական Արագածոտն գաւառը[4] *(ներկայիս Էջմիածնի, Արմաւիրի, Թալինի, Աշտարակի շրջաններն ամբողջութեամբ), Նիգ գաւառը*[5] *(ներկայիս Ապարանի, Արագածի, Սպիտակի շրջաններն ամբողջութեամբ, Վանաձորի շրջանի հարաւ-արեւմտեան հատուածը, ներկայիս Կոտայքի շրջանի նախկինում Նիգ գաւառի մաս հիւսիս-արեւելեան հատուածը), Անբերդի գաւառակը*[6] *(Անբերդ, Բիւրական, Տեղեր, Աւան բնակավայրերը), Շիրակի գաւառը*[7] *(հաւանաբար ոչ ամբողջութեամբ, այլ միայն դրա հարաւային հատուածը Անի քաղաքով եւ Երասխաձոր գաւառի*[8] *արեւմտեան մասը)։ Կարծում ենք, որ կուսակալութեան մաս է կազմել նաեւ Մասեացոտն գաւառի*[9] *հիւսիս-արեւմտեան հատուածը՝ Սուրբ Մարի բերդաքաղաքով։ Սա վկայւում է «Գիրք դատաստանաց Մխիթարայ Գոշի» ձեռագրի յիշատակարանում նշուած մի դէպքի պատմութեամբ, որի համաձայն Սուրբ Մարիում Այրարատի յաջորդ կուսակալ Քուրդ Ա. իշխանաց իշխանը մոնղոլական գերութիւնից ազատել է Տէր Մարկոս արքեպիսկոպոսին, որ բաւականին դեգերումներից յետոյ հասել է*

4 ՅԱԿՈԲԵԱՆ, Թ. Խ., *Հայաստանի պատմական աշխարհագրութիւն, «Միտք»* հրատարակչութիւն, Երեւան 1968², էջ 143-147:

5 Անդ, էջ 157-158:

6 Անբերդի գաւառակը եղել է Արագածոտնի մաս: Հաւանաբար ԺԳ. դարում, կապուած կուսակալութեան-փոխարքայութեան մայրաքաղաք դառնալու հետ՝ ներկայացուել է որպէս առանձին գաւառակ:

7 ՅԱԿՈԲԵԱՆ, Թ. Խ., նշ. աշխ., էջ 138-143:

8 Երասխաձոր, գաւառ Մեծ Հայքի Այրարատ աշխարհում: Յիշատակում է Մովսէս Խորենացին: Իր տարածքով համապատասխանում էր Արշարունիք եւ Գաբեղեանք գաւառներին՝ միասին վերցրած: Երասխաձորը եւ յունական, եւ հին հայկական աղբիւրներում յիշատակւում է իբրեւ Արշարունիք գաւառի հոմանիշ (ՅԱԿՈԲԵԱՆ, Թ. - ՄԵԼԻՔ-ԲԱԽՇԵԱՆ, Ս. - ԲԱՐՍԵՂԵԱՆ, Հ., *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան*, հտ. Բ., Երեւան 1988, էջ 212):

9 Սուրբ Մարի, բերդաքաղաք Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Ճակատք գաւառում: Գտնւում է գաւառի հիւսիսային կողմում, Արաքսի աջափնեակում, Խաչասար կոչուող լեռան հարաւային ստորոտին (ՅԱԿՈԲԵԱՆ, Թ. - ՄԵԼԻՔ-ԲԱԽՇԵԱՆ, Ս. – ԲԱՐՍԵՂԵԱՆ, Հ., *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան*, հտ. Դ., Երեւան 1998, էջ 726):

Հայոց կաթողիկոսանիստ Հռոմկլայ եւ 1238 թուականին յիշատակագրութիւն է թողել վերը նշուած ձեռագրում. «...եւ առաքելաշնորհ տէր Մարկոսի արիեպիսկոպոսի ... Եւ արդ էր սա ի գաւառէն Սուրբ Մարոյ... Եւ արդ զեպիսկոպոսս զայս իշխան ոմն ի գերելոցն, որոյ անունն Քուրդ ասի, յիշատակ նորա՝ աւրհնութեամբ, ազատեալ յանաւրինացն, եւ սա ցաւագին սրտիւ եւ բեկեալ անձամբ դիմեալ յայս աթոռս հայրապետական...»[10]։

Որեւէ ապացոյց չկայ, բայց կանխատեսել է, որ նորաստեղծ կուսակալութիւն կազմի մէջ մտել է նաեւ Ոստան Հայոց գաւառի հիւսիս-արեւմտեան հատուածը Դուին քաղաքով եւ Խոր Վիրապ սրբավայրով, որ պատմական Այրարատ նահանգի սիրտն էր եւ առանց այդ գաւառի առկայութեան նոր վարչական միաւորը չէր ստանայ Այրարատ անունը։

Ենթադրելի է, որ Այրարատի կուսակալութեան կազմի մէջ մտել է նաեւ Բջնի բերդաքաղաքը շրջակայ հողերով։ Դրա ապացոյցն է, որ Այրարատի կուսակալութեան հոգեւոր կենտրոնը տեղակայուել է հէնց Բջնիում[11]*, այլ ոչ թէ Յովհաննավանքում կամ Վաչուտեաններին պատկանող մէկ այլ վանական կառոյցում։ Այս փաստը նաեւ կարող է բանալի դառնալ նախորդ ենթադրութեան՝ Դուինը եւս Այրարատի մաս լինելու օգտին, քանի որ Այրարատի հոգեւոր կենտրոնի գահակալները Բջնիին զուգահեռ նստում էին Դուին քաղաքում։*

Այսպիսի մօտաւոր սահմաններում ստեղծուած պետական վարչական միաւորը ըստ նրա կազմում յիշուած գաւառների տարածքների հանրագումարի ունեցել է աւելի քան 11 հազար քառակուսի հազարամետր տարածք եւ իրաւամբ եղել է շահնշահ Զաքարէ Բ. Զաքարեանի ստեղծած կուսակալութիւններից ամենամեծը։

Այրարատի կուսակալութեան այս տարածքը ամենայն հաւանականութեամբ այս չափերով գործել է 1205-1236 թուականներին, մինչեւ մոնղոլական արշաւանքներն ու Զաքարեան Հայաստանի նուաճումը, թէեւ դրանից յետոյ եւս Վաչուտեաններն իրենց կոչել են Այրարատի տէր, բայց հաւանաբար այդչափ մեծ աշխարհագրական տարածքի պատասխանատու այլեւս չեն եղել։ Քուրդ

10 *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԳ դար*, ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, Ա. Ս. (կազմեց), Երեւան 1984, էջ 205-206:

11 ՊԵՏՐՈՍԵԱՆՑ, Տ., *Այրարատեան կուսակալութիւն-փոխարքայութեան հոգեւոր կենտրոնները*, ի «Էջմիածին», 2017, Զ., էջ 43-57:

© National Library of Armenia

Ա. իշխանաց իշխանը Սաղմոսավանքի Սուրբ Աստուածածին-գրատան հիւսիսային պատին 1255 թուականին արձանագրել է. «...Ես՝ Քուրդ, որդի Վաչէի, կուսակալ Այրարատ գաւառիս...»[12]: *Նրա ծոռը՝ Քուրդ Բ. իշխանաց իշխանի որդի Թէոդոս Զրքին իշխանաց իշխանը 1350 թուականին Յովհաննավանքում արձանագրել է.* «Թվ/ին/ ՉՂԹ /1350/: ... Ես՝ Թէոյդոս մականուն Զրքին, իշխանաց իշխան, որդի Անբերդեցի Քրդին իշխանաց իշխանին, որդո Տայիրին, թոռն Մեծ Քրդին, արի եւ քաջին Վ/ա/չէի, զայս հաստատ արձան գրեցաք եւ տվաք ի մեր պապանց հալալ գանձագին հայրենիք՝ ի հանդէն Սերկեւելո ի ս/ուր/ք Կարապետն եւ ի ս/ուր/ք Կաթողիկէն, որ եդե/ա/լ է շիրիմ պարոն հայրն իմ՝ Այրարատին տէրն»[13]:

Մոնղոլական տիրապետութեան հաստատումից յետոյ հայկական իշխանական վերնախաւի իրաւական եւ քաղաքական դերակատարները փոխուել են: ԺԳ. դարի կէսերից, Իւանէ Ա.-ի որդու՝ Աւագի մահից յետոյ հզօրացած Օրբելեանները խախտել են ստեղծուած կարգավիճակը եւ առաւել դերակատարութեան հասել: 1251 թուականին Կարակորում գնացած եւ Մանգու խանից բացառիկ կարգավիճակ ստացած Սմբատ Օրբելեանը վերադարձից յետոյ գրաւել է Վայոց Ձորի նախկինում Պռոշեան-Խաղբակեաններին պատկանած տարածքները, հասել հիւսիս-արեւմուտքում Այրարատի կուսակալութեան տարածքին՝ գրաւել Վաչուտեանների ենթակայ Այրարատի մէջ մտնող Ուրծը, Վեդին, Երեւանը[14], *ինչպէս նաեւ հիւսիս-արեւելեան հատուածում գրաւել Այրարատի կուսակալութեան հոգեւոր կենտրոն Բջնին: Այդ դէպքերի մասին պատմիչ Ստեփանոս Օրբելեանը յայտնել է, որ Սմբատ Օրբելեանը* «էառ եւ զեղեգիս եւ զամենայն գաւառն Վայոց ձորոյ, զԳողահանսն, զՈւրծն եւ զՎեդի իւր ձորովն մինչեւ յԵրերաւնսն, եւ ի Կոտայսն եւ ի Գեղարքունի բազում շէնս եւ աւանս»[15]: *Այդ տարածքները, մասնաւորապէս Բջնին Օրբելեաններին է պատկանել նաեւ 1270ական թուականներից յետոյ: Այսպէս է ներկայացրել Ստեփանոս Օրբելեանը.* «Այս գիր յիշատակի եւ արձան անջնջելի է իմ Տարսայիճիս իշխանի, որդւոյ մեծին Լիպարիտի եղբօր Սմբատայ մեծ իշխանի, կուսակալի յայսմ նահանգի, որ իշխեցող էի այսմ գաւառացն ի դրանէն Բարկուշատայ մինչեւ ցսահմանն Բջնւոյ...»[16]:

ԺԴ. դարի առաջին տասնամեակում Վաչուտեան գերդաստանի նոր կուսակալ Քուրդ Բ. իշխանաց իշխանը հզօրացել էր այնքան, որ յաղթական պատերազմներ է մղել եւ վերադարձրել կորցրած տարածքները: Դրա վկայութիւնն է 1330ական թուականներին գրիչ Սարկաւագ Մոնոզոնի կողմից Յովհաննավանքում արտագրած Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն կաթողիկեայց թղթի» ձեռագրի յիշատակարանի հետեւեալ հատուածը. «Եւ յայսմ ժամանակի երեւեալ քաջ եւ արի, յաղթող եւ բարձրաբազուկ իշխանաց իշխան յազգէն Վաչէի, որդի Տայիրին, որդւոյ բարեպաշտ եւ աստուածասէր Քրդին, որ եւ անուն նորա Քուրդ կոչի, որոյ անուամբն եւ քաջութեամբն մնաց գաւառս մեր եւ զվանորայքս անշարժ յայսմ մեղաշարժ եւ դառն ցասմանէս, զի յայսմ նուազեալ եւ դառնացեալ աւուրք որ վասն մեղաց մերոց երեւեալ մեծափառ եւ աստուածահաճոյ մեծ զաւրավար եւ երեւելի նախամարտիկ, պարծանաց եւ զարդու զաւակն Հայաստանեաց, ամէնաւրհնեալ՝ Քուրդն, զի ոտնաձայնք երիվարացն նորա եւ ճաւճիւն նիզակացն եւ փայլատակումն՝ սուսերացն, ճայթմունք՝ աղեղացն եւ կուռ զրահքն եւ ասպարափակն լինելն եւ այլ ահարկու կազմուածն զարհուրեցուցանէին զթշնամիսն, թո՛ղ զյաղթութիւն եւ զքաջութիւն եւ զբազում պատերազմաց վանումն ի ձեռն նորա եւ ազատազաւրաց նորա բազմութիւն գեղեցկութեամբ իբրեւ զաւրս երկնից եւ քաջութեամբ եւ յաղթութեամբ իբրեւ զառիւծ կամ զքաջ արծուի ի վերայ նապաստակաց յամենայն պատերազմունս: Այնու առաջի այլասեռ թագաւորացն՝ Ղազանին եւ Ղարպանդին եւ Պուսաիդ եւ մեծամեծ եւ ասպարապետ նոյինացն մեծարգոյ եւ փառաւոր երեւեալ, եւ *յամենեցունց շուք եւ պատիւ եւ խիլայ ընդունեալ*, պահէր խնամաւքն եւ ողորմութեամբն Աստուծոյ զգաւառս եւ զվաներս ի խաղաղութեան եւ այլոց գաւառակցացն բազում կարեկից եւ աւգնական լինէր»[17]:

---

12 ՄԱՆՈՒՉԱՐԵԱՆ, Ա., *Քուրդ Ա. Վաչուտեանի երկու արձանագրութեան վերծանութիւն*, էջ 47:

13 ՂԱՖԱԴԱՐԵԱՆ, Կ., *Յովհաննավանքը եւ նրա արձանագրութիւնները*, Երեւան 1948, էջ 92:

14 *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ. Գ., ՀՍՍՀ ԳԱ հրտ., Երեւան 1976, էջ 623:

15 *Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց*, Թիֆլիս 1910, էջ 411-412:

16 Անդ, էջ 416-417; ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼԵԱՆ, *Սիւնիքի պատմութիւն*, ԱԲՐԱՀԱՄԵԱՆ, Ա. Ա., (հրտ.), «Սովետական գրող», Երեւան 1986, էջ 332: ԱԼԻՇԱՆ, Հ. Ղ., *Սիսական, տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի*, Ս. Ղազար, Վենետիկ 1893, էջ 154:

17 *Ցուցակ Վենետիկի*, հ. Է, էջ 640-645: Տե՛ս նաեւ *ԺԴ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*: ԽԱՉԻԿԵԱՆ, Լ. – ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, Ա. – ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Ա., (կազմցին), Նախիր հրտ., Երեւան 2018, էջ 323-327:

© National Library of Armenia

Մոնղոլ թագաւորներ Ղազանի, Ղարպանդի եւ Պուսաիդի պատուին արժանացած Քուրդ Բ. իշխանաց իշխանն զօրական կարողութիւններով վերադարձրել է հայրենի Այրարատի կուսակալութեան տարածքները, անգամ օգնել է միւս հայ իշխանաւորներին իրենց տիրոյթների պահպանութեան գործում։ Նա իր յաղթանակների առթիւ Կարբիում 1330ական թուականներին յաղթակամարեկեղեցի է կառուցել[18]*։*

ՎԱՉՈՒՏԵԱՆՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԻ (ՍԵՓԱԿԱՆ) ՏԻՐՈՅԹՆԵՐԸ

Մեզ հասու տուեալների համաձայն դիտարկենք սեփականութեան իրաւունքով Վաչուտեաններին տրուած տարածքների սահմանները։ Ըստ Զաքարիա Քանաքեռցու դրանք Արագածոտն, Շիրակ, Նիգ գաւառները եւ Անբերդ գաւառակն էին։

Արագածոտնի գաւառն այդ ժամանակներում ներառել է ներկայիս Էջմիածնի, Թալինի, Աշտարակի շրջանները։ Շիրակը ներկայիս Գիւմրիի, Արթիկի, Արաքսից աջ գտնուող Անիի շրջանները, Նիգ գաւառը՝ ներկայիս Ապարանի, Արագածի, Նայիրիի, Սպիտակի, Գուգարքի շրջանները։ Անբերդի գաւառակը՝ Անբերդ բերդաքաղաքը, Բիւրական, Աւան, Տեղեր բնակավայրերը։

Ա. Նիգ գաւառ

Նիգ գաւառը հիւսիս-արեւելքում սկսուել է Բազումի լեռնաշղթայից եւ շարունակուել Ծաղկունեաց շեռնաշղթայով մինչեւ Հրազդան գետը։ Այս կողմում սահման կարող է լինել ներկայիս Բուժական գիւղի մօտ գտնուող Թեղենեաց վանական համալիրը, որ մի լեռնաբազուկով է բաժանուած Բջնիի բերդից։ Այստեղ է արձանագրուել Վաչուտեան իշխանատան կողմից կուսակալութեան տարածքն ստանալու մասին առաջին անուղղակի յիշատակութիւնը։ Այստեղ ԺԱ. դարում կառուցուած կենտրոնագմբէթ եկեղեցու արեւմտեան կողմում Վաչէ Ա.ի կինը՝ Մամախաթուն իշխանուհին կառուցել է գեղեցկատես, բաւականին թանկարժէք քառասիւն գաւիթ։ Շինութիւնն աւարտուել է 1211 թուակա-

18 ՊԵՏՐՈՍԵԱՆՑ, Տ., *Քուրդ Բ. Անբերդեցի Երկարակեաց Իշխանաց իշխան (1300-50-ականներ), ժամանակն ու գործը*, ի «Հայկազեան Հայագիտական Հանդէս», հտ. 41, 2021, էջ 279-295:

նին[19]*։ Նման շինութեան կառուցումն այդ ժամանակների համար տեւում էր 5-6 տարի։ Հաշուի առնելով այդ փաստը յետադարձ հաշուարկով փաստենք, որ կառուցման սկիզբը կարող էր լինել 1205-1206 թուականը։ Փաստօրէն արեւելքում Վաչէ Ա.ի տիրոյթի սահմանը եղել է Թեղենեաց վանքի մերձակայքում։ Այդ սահմանը չի անցել լեռնաբազուկը, քանի որ հակառակ կողմում գտնուող Բջնին տրուել էր Իւանէ Ա.ին, իսկ Ծաղկաձորում հաստատուել էր Արցախից եկած Վասակ Խաղբակեանը։*

Նիգ գաւառի ներսատարածքում Վաչէ Ա.ն ներկայիս Ափնայ եւ Արայի գիւղերի միջնամասում, պատմական Նիգատուն գիւղի սահմանում, Դուին-Վիրք ճանապարհի վրայ 1213 թուականին կառուցել է Արայիի բաւականին ընդարձակ իջեւանատունը։ Սա եւս կառուցման ժամանակահատուածով, խօսում է այն կարծիքի օգտին, որ գաւառը Վաչէ Ա.ին է տրուել 1205/6 թուականին։

Վաչուտեանների երկրորդ սերնդի ներկայացուցիչ Քուրդ Ա. իշխանաց իշխանը, կնոջ՝ Խորիշահ Մամիկոնեանի հետ ԺԳ. դարի 30ականներին կառուցել է Եղիպատրուշի կենտրոնագմբէթ կաթողիկէ եկեղեցին եւ գաւիթը[20]*, 1240-1250ական թուականներին՝ Աստուածընկալի կենտրոնագմբէթ կաթողիկէ եկեղեցին եւ գաւիթը*[21]*, Հարթաւանի մատուռը, Աստուածընկալի, Վարդենուտի բերդերը, Լուսագիւղ գիւղի իջեւանատունը, Վարդենուտի իշխանական դղեակը*[22]*։*

19 ՊԵՏՐՈՍԵԱՆՑ, Տ., *Թեղենեաց վանքը եւ նրա առաջնորդները*, ի «Էջմիածին», 1977, Ը., էջ 48-51: Նոյն, *Թեղենեաց վանքը իբրեւ մշակութային կենտրոն*, ի *«Պատմա-բանասիրական հանդէս»*, 1982, թիւ 1, էջ 121-129:

20 ՊԵՏՐՈՍԵԱՆՑ, Տ., *Մուսեան գիւղի Աստուածածին եկեղեցին եւ արձանագրութիւնները*, ի *«Պատմա-բանասիրական հանդէս»*, 1981, թիւ 3, էջ 289-294:

21 ՊԵՏՐՈՍԵԱՆՑ, Տ., *Աստուածընկալի վանքը*, ի *«Էջմիածին»*, 1978, Գ., էջ 57-61:

22 ՊԵՏՐՈՍԵԱՆՑ, Տ. (Պետրոսեանց Վիկտոր), *Նիգ-Ապարանի պատմաճարտարապետական յուշարձանները* (գիրքը տպագրութեան է երաշխաւորել Հայկական ԽՍՀ պատմութեան եւ կուլտուրայի յուշարձանների պահպանութեան ընկերութիւնը, խմբագիր ճարտարապետութեան դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մուրադ Հասրաթեան): Երեւան 1988, 88 էջ, 24 թերթ նկար: Նոյն, *Վաչուտեանների իշխանական տան եկեղեցաշինական գործունէութիւնը*, ի *«Էջմիածին»*, 1977, Թ.-Ժ., էջ 84-86: Նոյն, *Ապարանի շրջանում ստեղծագործած ճարտարապետներ ու քարգործ վարպետներ*,

© National Library of Armenia

Ապարանի տարածաշրջանի ներկայիս Վարդենիս գիւղի մօտ, Արագած սարի ստորոտին, բնակավայրի արեւմտեան բարձունքում, Քասաղ գետի ափին, Արայի լեռան դիմաց, 1230ական թուականների վերջերին, մոնղոլների կողմից Անբերդի աւերումից յետոյ, Քուրդ Ա. Վաչուտեանը կառուցել է իր նոր Վարդենիսի գահանիստ դղեակը[23]*, որ մայրաքաղաք է եղել 1240-1260-ական թուականներին։*

Կուսակալ Քուրդ Ա.ն եւ Խորիշահ իշխանուհին նուիրատուութիւն են կատարել Թեղենեաց վանքին։ Նուիրատուութեան փաստն արձանագրուած է Մամախաթուն իշխանուհու կառուցած գաւթի արեւմտեան պատին։

Սա Վաչուտեան իշխանատան ներկայացուցիչների վերջին արձանագրութիւնն է Նիգ գաւառի տարածքում։

Բ. Արագածոտնի գաւառ

Նիգ գաւառի շարունակութիւնն էր Արագածոտնի գաւառը վերջինիս արեւմտեան կողմում, Արագած լեռան հարաւային, հարաւ-արեւմտեան լանջերին եւ Այրարատեան դաշտի հիւսիսակողմում։

Վաչուտեաններն այստեղ եւս մեծ շինարարական աշխատանքներ են կատարել։ 1200-1340ական թուականներին կառուցել են Սաղմոսավանքի (1210-1240)[24]*, Յովհաննավանքի (1210-1250)*[25]*, Ուշիի (1210-1260) վանական համալիրները, Կարբիի բերդը (1220-1230), Կարբիի յաղթակամար զանգակատունը (1330)։ Վաչուտեան իշխանատան երրորդ-չորրորդ սերնդի իշխանաւորներ Հասան եւ*

ԵՊՀ, ի *«Երիտասարդ գիտաշխատող, հասարակական գիտութիւններ»*, 1981, թիւ 1, էջ 171-175:

23 ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, *Պատմութիւն Հայոց*, աշխատասիրութեամբ Մ. ԵԼԻԲ-ՕՀԱՆՋԱՆԵԱՆ, Կ. Ա. (աշխտ.), Երեւան 1961, էջ 364-365: Տես ՊԵՏՐՈՍԵԱՆՑ, Տ., *Կուսակալ (փոխարքայ) Քուրդ Ա Վաչուտեանի Վարդենիս իշխանանիստը*, ի *«Պատմա-բանասիրական հանդէս»*, 2020, թիւ 3, էջ 198-212:

24 ՊԵՏՐՈՍԵԱՆՑ, Տ., *Սաղմոսավանք*, ի *«Էջմիածին»*, 1981, Դ., էջ 55-58:

25 ՊԵՏՐՈՍԵԱՆՑ, Տ., *Այրարատեան կուսակալութիւն-փոխարքայութեան հոգեւոր կենտրոնները*, ի *«Էջմիածին»*, 2017, Զ., էջ 43-57:

Դաւիթ իշխանները 1260-1290ին կուսակալութեան մայրաքաղաք են դարձրել մոնղոլների կողմից աւերուած, իրենց կողմից վերականգնուած Կարբի բերդաքաղաքը։

Վաչէ Ա. Վաչուտեանը 1210ական թուականների կէսերին ստանալով կուսակալի պաշտօնը ամրացրել ու մայրաքաղաքի է վերածել Անբերդ ամրոցը։ Այն մայրաքաղաք է ծառայել մինչեւ 1236 թուականը, մինչեւ մոնղոլների կողմից աւերուելը։

Անբերդից մի քանի կիլոմետր հարաւ, ձորի բարձրադիր ելուստի վրայ Վաչէ Ա. Վաչուտեանն ու Մամախաթուն իշխանուհին 1206-1218 թուականներին կառուցել են Տեղերի եկեղեցական համալիրը՝ Կաթողիկէ եկեղեցին, գաւիթը՝ կտուրի ճակատամասում տեղադրուած երկու փոքրիկ եկեղեցիներով[26]*, որով գաւթի ճակատամասը ստացել է յաղթակամարի տեսք։*

Վաչուտեան իշխանատան հինգերրորդ սերնդի ներկայացուցիչ Քուրդ Բ. Երկարակեաց իշխանաց իշխանը[27]*, 1300ական թուականների սկզբին, ամբողջովին վերակառուցել է Անբերդ բերդաքաղաքը եւ այն կրկին դարձրել կուսակալութեան մայրաքաղաք*[28]*։ Նա Կարբի գիւղաքաղաքում 1330ական թուականներին թշնամու դէմ տարած յաղթանակները նշանաւորել է զանգակատուն-յաղթակամարի կառուցմամբ։*

Սեփական տարածքների միւս հատուածներում Վաչուտեանները շինարարական աշխատանքներ չեն կատարել։

Վաչուտեաններին սեփականութեան իրաւունքով տրուած Արագածոտնի եւ Նիգ գաւառների տարածքը միասին կազմել է մօտ

---

26 ՊԵՏՐՈՍԵԱՆՑ Տ., *Վաչուտեան տոհմի իշխանուհիները մշակութային բարերարներ*: Խաչատուր Աբովեանի անուան ՀՊՄՀ Գիտական տեղեկագիր (հումանիտար գիտութիւններ), № 1 (39), 2021 թ., էջ 39-52: Նոյնի, *Ճարտարապետական եզակի կառոյցներ Այրարատի փոխարքայութիւնում*. - Խաչատուր Աբովեանի անուան ՀՊՄՀ Հայագիտական հանդէս, 2020, թիւ 1 /46/, էջ 94-106:

27 ՊԵՏՐՈՍԵԱՆՑ Տ., *Քուրդ Բ. Անբերդեցի Երկարակեաց Իշխանաց իշխան (1300-50-ականներ), ժամանակն ու գործը*, ի «Հայկազեան Հայագիտական Հանդէս», հատ. 41, 2021, էջ 279-295:

28 ՊԵՏՐՈՍԵԱՆՑ, Տ., *Անբերդի ամրոցը*, ի «Հայկական բանակ», 2018, թիւ 1-2, էջ 246-253:

© National Library of Armenia

4000 քառակուսի հազարամետր[29]։ Պայմանականօրէն եթէ դրան գումարենք Շիրակի գաւառի 3730 քառակուսի հազարամետրի կէսը, միասին կը կազմի 7000 քառակուսի հազարամետրից մի փոքր աւելի։ Հետեւաբար Վաչուտեանների սեփական կամ հայրենի տարածքները կազմել են մօտ 7000 քառակուսի հազարամետր։

Այդ տարածքի սահմաններն այսպիսի տեսք են ունեցել. սկսուել են Արագած սարի հիւսիս-արեւելեան գագաթից՝ ներկայիս Ծաղկահովիտ բնակավայրով եւ հասել մինչեւ այժմեան Վանաձոր քաղաքի մօտակայքը եւ Ծաղկունեաց լեռնաշղթայի արեւմտահայեաց լանջերով ձգուել մինչեւ Թեղենեաց վանքը, այդտեղից շարունակուել մինչեւ Հրազդան գետը, որտեղից շրջուելով դէպի արեւմուտք՝ իրենց մէջ են առել Արայի լեռը եւ Քասաղ գետի ձախափնեայ բաւականին լայն շերտի ընդգրկմամբ իջել մինչեւ Աշտարակ գիւղաքաղաք եւ շրջանցելով այն հիւսիս-արեւելքից, իր մէջ առել ներկայիս Էջմիածնի, Արմաւիրի, Թալինի շրջանները, Արաքս գետի ձախ ափով հասել Երասխաձոր գաւառի տարածքը եւ այդտեղից դէպի հիւսիս ձգուել մինչեւ Արագած սարի գագաթը։

Այս սահմանները մասամբ համապատասխանել են 1243 թուականին Կոստանդին կաթողիկոսի կողմից հիմնուած Յովհաննավանքի եպիսկոպոսական թեմին տրուած հոգեւոր տարածքին. «ետու երկիրս սեփական վիճակ ս/ուր/ք Կարապետիս յԱպարանուց ընդ որ բաժանի գետն Քասաղ մինչեւ յԱշնակ»[30]։

Զաքարիա Քանաքեռցին յայտնել է, որ Շիրակը եւս եղել է Վաչուտեանների սեփական տիրոյթ։ Բայց այդ հաստատող բաւարար փաստեր չկան։ Շիրակի գաւառի հետ առնչուող յիշատակութիւններ Վաչուտեանները չունեն։ Թերեւս այն, որ Վաչէ Ա. իշխանաց իշխանը եւ Մամախաթուն իշխանուհին, 1221 թուականին նուիրատուութիւն են կատարել Հառիճի վանքին, 1229 թուականին գրատուն են կառուցել Հոռոմոսի եկեղեցում[31] եւ միեւնոյն

29 Ըստ Սուրէն Երեմեանի *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»ի* (ՀՍՍՌ ԳԱ հրատարակչութիւն, Երեւան 1963) աշխատութեան Արագածոտնի տարածքը 3050, Նիգի տարածքը՝ 1000, Մասեացոտնի տարածքը 2800, Շիրակի տարածքը՝ 3730 քառակուսի հազարամետր էր։

30 ՂԱՖԱԴԱՐԵԱՆ Կ., *Յովհաննավանքը*, նշ. աշխ., էջ 95։

31 ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆՑ, Յ., *Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ*, Էջմիածին 2014, էջ 448։

1229 թուականին Մամախաթուն իշխանուհին Անիում ունեցած իր Իշխանի ակ տեղավայրի ձիթհանը նուիրել է Սանահինի Աստուածածին եկեղեցուն[32]։

Սակայն այս արձանագրութիւնները բաւարար հիմք չեն տալիս արձանագրելու, որ Արագածոտնի, Նիգի, Անբերդի նման Շիրակ գաւառն էլ ամբողջութեամբ եղել է Վաչուտեանների սեփական տիրոյթի մաս։ Ամենայն հաւանականութեամբ, Շիրակի գաւառը եղել է Վաչէ Ա. Վաչուտեանի սեփական տիրոյթի մաս, բայց այդ հատուածում սահմանը աւարտուել է Երասխաձորի մօտ, ինչպէս նշել է Զաքարիա Քանաքեռցին։ Բայց Վաչէ Ա. Վաչուտեանի անմիջական յաջորդ Քուրդ Ա.ի օրօք, երբ 1236 թուականին Զաքարեան Հայաստանում եւս հաստատուել է մոնղոլական տիրապետութիւնը, Վաչուտեանների դերը որպէս կուսակալ նուազել է, եւ նրանց իշխանութիւնից Շիրակի հարաւային հատուածը դուրս է եկել։

Արագածոտն-Նիգ-Անբերդի սահմաններից դուրս Վաչուտեանները սեփականութիւն են ունեցել Երեւանի տարածքում եւ այլուր։ 1213 թուականին Վաչէ Ա.ն Կեչառիսի եկեղեցուն նուիրել է «ի գանձագին գեղն մեր Շէնգաւիթ այգի»[33]։ Համաձայն արձանագրութեան Շէնգաւիթը եղել է նրանց սեփականութիւնը եւ իրենք այդ գիւղում գտնուող այգի են նուիրել Կեչառիսի եկեղեցուն։ Ուշիի Սուրբ Սարգիս եկեղեցու անթուակիր արձանագրութիւնից երեւում է, որ Վաչէ Ա.ն եկեղեցուն նուիրել է Երեւանում ունեցած դրամագին այգին[34]։ 1240-1250ական թուականներին Վաչուտ Բ.ի որդի Վաչէ Գ.ի կողմից Սանահինի վանքին է նուիրուել «դրամագին Բադալի այգին ի Շէնգաւիթ»[35]։ Սակայն այս փաստերով, առանց լրացուցիչ հիմնաւորման, դժուար է պնդել, որ Երեւանը եւս եղել է Վաչուտեանների գանձագին (սեփական) տիրոյթ։ Թէեւ այս պարագայում առկայ է մի հետաքրքիր փաստ։ 1264 թուականին յայտնի մեծահարուստ Աւետիսի որդի Սահմատինը գնել է

32 ՂԱՖԱԴԱՐԵԱՆ, Կ., *Սանահնի վանքը եւ նրա արձանագրութիւնները*, Երեւան 1957, էջ 134։

33 ՅՈՎՍԷՓԵԱՆ, Գ., *Խաղբակեանք*, Անթիլիաս 1969, էջ 314։

34 ԲԱԲԱՅԵԱՆ, Ֆ. - ՓԱԼԱՆԹԱՐԵԱՆ, Ա., *Ուշիի Ս. Սարգիս վանքի վիմական արձանագրութիւնները*, ի «Պատմա-բանասիրական հանդէս», 2001, թիւ 2, էջ 171։

35 ՂԱՖԱԴԱՐԵԱՆ, Կ., *Սանահին*, նշ. աշխ., էջ 136։

© National Library of Armenia

Երեւանը։ Իր գործարքի մասին նա Երեւանի Կաթողիկէ Աստուածածին եկեղեցու հարաւային պատին փորագրել է. «Ի թ/վիս/ ՉԺԳ /1264/: ... ես՝ Սահմատինս, պարոն Աւետե/ա/ց որդիս, զԵրեւան գնեցի հողու եւ ջրով»[36]։ *Արձանագրութեան հրատարակիչ Կարոյ Ղաֆադարեանը տարակուսել է.* «Սա առ ու ծախքի փաստաթուղթ չի, այլ լոկ յայտարարութիւն, որովհետեւ անգամ չի գրուած, թէ ումից է գնել, բանիսով եւ ովքեր են վկաները»[37]։

Այս «թէ ումից է գնել» *հարցը թերեւս պատասխան ունի։ Յովհաննավանքի Կաթողիկէ եկեղեցու ներսում, աւագ խորանի պատին փորագրուած է.* «Կամաւն Ա/ստուծո/յ, ես՝ Սահմատին, որդի պարոն Աւետե/ա/ց եւ ամուսին իմ Մամախաթուն՝ դուստր պարոն Ումեկին, միաբանեցաք սրբոցս»[38]։ *Միջնադարում նման արձանագրութիւնները հաւաստագրի նշանակութիւն ունեն եւ պատահական չէին կատարւում։ Յովհաննավանքի արձանագրութիւնը թուագրուած չէ, ինչը հնարաւորութիւն կը տար ուղղակի եզրակացութիւն անելու կատարուած գործարքի մասին։ Այս պարագայում հաւանական ենք համարում, որ Երեւանի* սեփականատէրը *Վաչէ Ա.ի որդի Քուրդ Ա. իշխանաց իշխանը վաճառող կողմն է եղել եւ գործարքից յետոյ Սահմատինը միաբանել է նրա հոգեւոր կենտրոն Յովհաննավանքին, ինչն էլ հաւաստուել է արձանագրութեամբ եւ արուել է ժամանակաշրջանի պահանջների համաձայն։*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այրարատի կուսակալութեան տարածքն անշուշտ աւելի ընդարձակ էր քան Վաչուտեանների սեփական /հայրենի/ տիրոյթը։ Կարծում ենք Վաչուտեաններն իշխանութիւն ունէին ամբողջ Արարատեան դաշտավայրի տարածքի նկատմամբ։

Սեփական տիրոյթներից հարաւ եւ արեւմուտք Այրարատի նահանգի կազմի մէջ էին մտնում Կոտայքի գաւառի մի մասը Երեւան բնակավայրով, Ոստան Հայոց գաւառը գրեթէ ամբողջութեամբ։

36 ՂԱՖԱԴԱՐԵԱՆ Կ., *Երեւանի միջնադարեան յուշարձանները*, Երեւան 1975, էջ 137, արձ. 1:

37 Անդ:

38 ՂԱՖԱԴԱՐԵԱՆ Կ., *Յովհաննավանքը*, նշ. աշխ., էջ 79, արձ. 9:

Կուսակալութեան սահմանները դէպի արեւմուտք եւ հարաւարեւմուտք ձգուել են Ծաղկունեաց լեռնալանջերով, Հրազդան գետին զուգահեռ դէպի Երեւան եւ, ներառելով այն, կորագծով, Դուին քաղաքի ընդգրկմամբ, Խոր-Վիրապից հարաւ դուրս եկել Արաքս գետը եւ գետի հունով բարձրացել մինչեւ Սուրբ Մարի բերդաքաղաքի սահմանը, ապա՝ գետի հունով Շիրակի կենտրոնական հատուածը՝ ընդգրկելով Անի մայրաքաղաքը։

Զաքարեան Հայաստանի պետական համակարգում հարաւային սահմանների պաշտպանութիւնը Սիւնիքից մինչեւ Դուինի հիւսիս-արեւմտեան սահմանը իրականացրել են Օրբելեանների ու Խաղբակեանների կուսակալութիւնները, իսկ կենտրոնական հատուածում՝ Դուինի սահմանից մինչեւ Անի մայրաքաղաք, այդ պարտականութիւնը կատարել են Վաչուտեանները։

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆՑ

© National Library of Armenia

Summary

BORDERS OF AYRARAT GOVERNORSHIP AND VACHUTYAN'S OWN TERRITORIES

TIGRAN PETROSYANTS

The territory of the governorship of Ayrarat was undoubtedly wider than the own possessions of the Vachutyans. We believe that the entire territory of the Ararat valley was under the Vachutyans' rule.

To the south-west of their own possessions, the Ayrarat province included a part of the Kotayk province with the settlement of Yerevan, almost the entire province of Vostan Hayots.

To the west and south-west, the borders of the governorship stretched along the slopes of Mount Tsaghkunyats parallel to the Hrazdan River to Yerevan and, including Yerevan, in a curved line from Khor Virap to the south went to the Araks River, along the river they ascended up to the border of the fortress-city of Saint Mari, then along the river they stretched to the central part of Shirak.

In the Armenian state system of the Zakaryans, the protection of the southern borders from Syunik to the northern-western border of Dvin was carried out by the governorships of the Orbelyans and Khaghbakyans, and in the central part from the border of Dvin to the capital of Ani, this duty was assigned to the Vachutyans.

ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՅՐ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ[1]

Ցանկալի է, որ գիտութեան եւ մշակոյթի երեւոյթների ու գործիչների յոբելեանների անհրաժեշտ արդիւնքները լինեն ո՛չ այսօրէական, այլ մնայուն՝ գրքային կամ այլ տեսակի արժէքներ։ Ծննդեան 200ամեակի առիթով այժմ ոգեկոչում ենք ԺԹ. դարի մեր մտաւոր մշակոյթի հսկայի՝ Ղեւոնդ վարդապետ Ալիշանի յիշատակն ու նրա բազմաճիւղ տարատեսակ վաստակը։ Առաւել քան վստահ ենք, որ այս ոգեկոչման բուն կամ հիմնական նպատակը պէտք է համարենք նրա աշխատած վաստակած գիտամշակութային ասպարէզներում արուածի հաշուեկշիռ ամփոփոյքն անելը եւ նոր անելիքների ծրագրումն եւ ուրուագծումը, որին յաջորդելու են Ալիշանի արծարծած խնդիրների նորանոր զարգացումներ։

Գալով մեր բուն խնդրին. նոր ժամանակների պատմագիտական աղբիւրագիտական աշխատութիւնների մէջ բաւական յաճախադէպ են տրտունջները, թէ Ղեւոնդ վարդապետ Ալիշանն իր օգտագործած աղբիւրները հիմնականում չի յղել, ըստ այդմ էլ շատերը յայտարարել են, թէ նրա վկայակոչումները թէական են կամ պակաս վստահելի։ Սկզբից եւեթ ասենք, որ օժանդակ միջոցներով կամ բուն ձեռագիր մատեաններ քննելով բաւական շատ

---

1 Տարբեր շեշտադրումներով յօդուածիս միտք բանին երկիցս զեկուցել ենք հեռավար գիտաժողովներում՝ նախ 2020 թուականի Յուլիսի 6ին, Երեւանում՝ *«Հայր Ղեւոնդ Ալիշան – 200»* եւ ապա 2021 թուականի Ապրիլի 27ին, Սանկտ Պետերբուրգում՝ *«Великие армянские просветители Мкртич Хримян и Гевонд Алишан — к 200-летию со дня рождения»*, 27-28 апреля 2021г., Санкт-Петербург, Россия» (*«Հայ մեծ լուսաւորիչներ Մկրտիչ Խրիմեան եւ Ղեւոնդ Ալիշան՝ ծննդեան 200ամեակի առիթով»*. 27-28 Ապրիլի 2021ին, Սանկտ Պետերբուրգ, Ռուսաստան)։

© National Library of Armenia